



ԶՊՄԿ բարեգործական հիմնադրանքը խթանում է շարունակական կրթությունը



Հանքերի հսկաները, հզոր տեխնիկան և արտադրողականությունը ուղիղ համեմատական են



ԶՊՄԿ-ում շարունակվում է թվայնացման լայնածավալ ծրագրի ներդրումը



ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ



№58
2026թ.



ՍԵՆՏԵՆՏԻՆԻ ՈՐ ԿՈՐԸ՝ ԲԵՆՆԻՐ ԱՏՏԱԳՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ



Komatsu PC 4000

Արդեն պատրաստ է շահագործման ԶՊՄԿ-ի ձեռք բերած, տարածաշրջանում առաջին Komatsu PC 4000 մակնիշի էքսկավատորը

ՄՈՒԿՆԵՐԻ ՄԻՋՎԵՐՈՒՄ

Կանանց միջազգային օրվա կառավարությանը յուրահատուկ նախաձեռնությամբ է հանդես եկել նաև ԶՊՄԿ արհեստակցական կազմակերպությունը: Քաջարանի մշակույթի տանը տոնական մթնոլորտ էր, արդեն ավանդույթ դարձած միջոցառման գլխավոր դերերում ընկերությունում երկարամյա աշխատանքային ուղի անցած կանայք էին: Միջոցառումը առաջին հերթին ևս մեկ առիթ է զնահատելու և արժևորելու իրենց աշխատանքին նվիրված կանանց: Այս տոնի շնորհիվ մարդիկ աշխատանքային միջավայրից դուրս միմյանց հետ շփվելու հաճելի հնարավորություն ստացան: Կանանց անձամբ շնորհավորելու էր եկել ԶՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուրդյանը: Շնորհավորական ելույթներ ունեցան նաև ընկերության Սարդկային ռեսուրսների գծով տնօրեն Զարա Սիանոզյան և ԶՊՄԿ արհեստակցական միության նախագահ Տիգրան Սարգսյանը: Միջոցառման հաճելի լուսանկարների հանձնման արարողությունը:




Աքանավորի՜ր
ՈՐ կողմ՝
ճանրամաններից
ծանոթանալու
համար

Ռոճան Խուդոլի

Զանգեզուրի
ողնձամուլիբոլեոնային
կոմբինատի գլխավոր տնօրեն

Հարգելի գործընկերներ, Արտանց շնորհավորում եմ ձեզ Մարտի 8-ի՝ Կանանց ճիշագային օրվա առթիվ:

Հայաստանում այս օրը սկիզբ է դնում կանանց միանյակին, և մինչև աղբյուրի 7-ը յուրաքանչյուր օրը առիթ է տղամարդկանց՝ ամուսինների, որդիների, հայրերի և, իհարկե, գործընկերների համար շնորհավորելու կանանց:

Զանգեզուրի ողնձամուլիբոլեոնային կոմբինատը մեծ և բազմադրոճի կուլեկտիվ է, որտեղ այսօր աշխատում է ավելի քան 4700 աշխատակից: Այս մեծ թիմի կարևոր մասն են կազմում կանայք, որոնք մեր կոլեկտիվի շուրջ 20 տոկոս են:

Այս ցուցանիշը բարձր է լեռնահանքային արդյունաբերության ոլորտին բնորոշ միջին մակարդակից:

Սա ևս մեկ անգամ առաջացրեց, ե



որ ժամանակակից լեռնահանքային արդյունաբերությունը վաղուց դադարել է լինել բացառապես տղամարդկանց ոլորտ:

Մեր ընկերությունում կանայք հաջողությամբ աշխատում են ամենատարբեր ուղղություններով՝ արտադրությունում, լաբորատորիաներում, ինժեներատեխնիկական ստորաբաժանումներում, բնադաշտային ոլորտում, ինչպես նաև վարչական և կառավարման համակարգում: Նրանցից շատերը զբաղեցնում են դաստիարակող դերեր:

Լեռնահանքային արդյունաբերությունը բարդ ոլորտ է, որը դաստիարակող դերերով, կարգադրություն և մեծ դաստիարակություն: Այդ իսկ դաստիարակող հատկապես կարևոր է նշել մեր կին գործընկերների նշանակալի ներդրումը ընկերության կայուն զարգացման գործում:

Մենք նաև հղարտանում ենք, որ ԶՊՄԿ-ում գործում է կորպորատիվ արդարության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ հավասար աշխատանքին՝ հավասար վարձատ-

րությամբ: Մեր ընկերությունում մասնագիտական կարողությունները, գործին նվիրվածությունը և աշխատանքի արդյունքները գնահատվում են անկախ սեռից:

Սակայն մեր դերը չի սահմանափակվում միայն մասնագիտական ձեռքբերումներով: Ըստ դեմքերում դուրս հաջողությամբ համատեղում եք դաստիարակող աշխատանքը ընտանիքի, երեխաների և հասարակության հանդեպ հոգատարության հետ: Ուժի, դաստիարակողության և հոգատարության այս համադրությունն առանձնահատուկ արժեք է հաղորդում մեր կոլեկտիվին:

Միևնույն ժամանակ, շնորհակալություն եմ հայտնում ձեզ մեր աշխատանքի, գործին նվիրվածության և դրոճեփոխակալի համար: Ձեր ներդրումը կարևոր դեր ունի ոչ միայն ԶՊՄԿ-ի հաջողությունների մեջ, այլ նաև մեր համայնքների և ողջ երկրի զարգացման գործում: Մաղթում եմ ձեզ ամուր առողջություն, երջանկություն, նոր հաջողություններ և ձեռքբերումներ ինչպես մասնագիտական գործունեության մեջ, այնպես էլ անձնական կյանքում:



Կանայք շնորհավորում են միմյանց



Ռիտա Մարտիրոսյան

Հարստացուցիչ ֆաբրիկայի փաթեթավորող
Հզոր մարդկանց համար դժվար աշխատանք չկա: Մեր կանայք բոլորն էլ աշխատասեր են, խելացի և սիրով կատարում են իրենց աշխատանքը: Արտանց շնորհավորում են բոլորին:



Ռուզան Սահակյան

Բացահանքի դիստենտչերական խմբի ավագ օդերատոր

Կանանց դերն ու ներգրավածությունը ցանկացած աշխատանքում շատ կարևոր է, ներկայությունը` խթանիչ ուժ:



Համեստ Լալայան

Գործավար

Հանքարդյունաբերությունում կանանց դերը չափազանց կարևոր է, նրանք կոտրում են կարծրատիկեր: Շնորհավորում են բոլորին:



Մովհնար Չոբանյան

Հարստացուցիչ ֆաբրիկայի սննչի մեքենավար

Մենք մեզ ոչ մի բանից չենք զրկում: Աշխատանքը չի խանգարում մեզ միշտ գեղեցիկ լինել: Մաղթում են բոլորին առողջ ու գեղեցիկ լինել, մասնագիտական առաջընթաց ունենալ:



Գոհար Զաքարյան

Վարչական դեղատանձենուի սղասարկող
Առողջություն և անսղառ
երջանկություն՝ բոլորին:



Անթառան Արզարյան

ՄՈԿ աշխատակից
Արևշատություն, երջանկություն
և առողջություն են մաղթում բոլոր կանանց:



Ինգա Ոսկանյան

ՄՈԿ, անձնակազմի հավաքագրման մասնագետ
Մաղթում են մեր գործընկեր կանանց
հաջողություններ աշխատանքում և անենուր:



Նարինե Խաչատրյան

Հարստացուցիչ Ֆաբրիկայի ժառանգավար
Բոլոր կանանց ցանականում են
առողջություն, երկար տարիների կյանք:



Աննա Ալեքսանյան

Ճաշարանի ղատասխանատու
Շնորհավորում են մեր կանանց, ցանկանում
են հավերժ սեր ու գեղեցկություն, հարատև
երջանկություն, թող ոչ միայն այս մեկ
ամիսը, այլ տարվա բոլոր ամիսները լցված
լինեն եռանդով ու ներդաշնակությամբ:



Ալինա Ստեփանյան

**Հարստացուցիչ Ֆաբրիկայի
սնիչի մեքենավար**
Աշխատանքը շատ հեշտ է ինձ համար:
Գործընկերներին մաղթում են
լինեն առողջ ու երջանիկ,
միշտ գեղեցիկ ու խնամված:

ԵՄՊՈՒՆԵՐ
ԻՆՏԵՐՎՅՈՒՆ
ՄԻԿՐՈՒՍԵՐ



Արդյունավետություն և կայունություն. ԶՊՄԿ-ի արտադրական ընդլայնման ծրագրերը

Հարցազրույց
ԶՊՄԿ կայուն զարգացման
գծով տնօրենի տեղակալ
Ասյա Ղազարյանի հետ

«Ձանգեզուրի տղնձանոլիբդեմային կոնքինատ» ՓԲԸ-ն օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներն իրականացնում է 2016 թ.-ին տրամադրված և մինչև 2041 թվականը գործող ընդերքօգտագործման իրավունքի շրջանակում: Գործող թույլտվությամբ հանքի տարեկան արտադրողականությունը սահմանված է մինչև 22 մլն տոննա: Հանքարդյունաբերության ոլորտում շահագործման ընթացքում հանքաքարի մետաղի դարձնակության նվազումը բնական և կանխատեսելի գործընթաց է, որը դասակարգում է ռազմավարական վերանայումներ՝ արտադրության կայունությունն ու արդյունավետությունը դաշտայնացնելու համար: Ընկերության կողմից շահագործվող Քաջարանի հանքավայրում արձանագրվող օգտակար հանածոյի դարձնակության նվազման միտումը դարձել է արտադրական ռազմավարության վերանայման առաջնային գործոն: ԶՊՄԿ-ն դատարանական մարմիններին անհրաժեշտ արտադրողականությունը փուլային եղանակով մինչև տարեկան 30 մլն տոննա ավելացնելու վերաբերյալ: Նախաձեռնության նպատակն է փոխհատուցել հանքաքարի որակական փոփոխությունները, դաշտայնացնել արտադրության ծավալները և ադապտել ընկերության կայուն գործունեությունը ու մրցունակությունը: ԶՊՄԿ կայուն զարգացման գծով տնօրենի տեղակալ Ասյա Ղազարյանը ներկայացնում է ընդլայնման նախագծի ուղղություններն ու ակնկալվող արդյունքները:



- **Տիկին Ղազարյան, ի՞նչ փոփոխություններ է նախատեսում նոր նախագիծը:**
- Ընդլայնման նախագծի առաջնային արտադրողականության ավելացումն է: Մեր նպատակն է Քաջարանի բացահայտված տարեկան արտադրողականությունը՝ գործող լիցենզիայով սահմանված տարեկան 22 մլն տոննայից, ըստ արդյունահանվող հանքաքարի, աստիճանաբար հասցնել տարեկան 30 մլն տոննայի: Կարևոր է ընդգծել, որ արդյունահանումն իրականացվելու է գործող բացահայտված սահմանների աճից փոփոխմամբ:
- Տարեկան հավելյալ մինչև 8 մլն տոննա հանքաքարի վերամշակում իրականացնելու համար ԶՊՄԿ-ն նախատեսում է մի շարք ենթակառուցվածքների և համակարգերի արդիականացում և նորերի կառուցում: Օրինակ՝ արդիականացվելու են դիզելային ավտոդարձեր, դաշտայնացման և հարստացման նոր մասնաշենք, ժամանակակից չափանիշների համաձայն՝ թափոնների դաշտեր, ներդրվելու է հրդեհաշիջման նոր և ժամանակակից համակարգ:
- Գոյություն ունեցող հանքաքարի դաշտայնացման հարևանությամբ կկառուցվի նորը, որն իր տարողունակությամբ հնարավորություն կտա մեծացնել դաշտայնացման խոշոր շարժված հանքաքարի ծավալները՝ բարձրացնելով արտադրական ճկունությունը:
- Նշված բայերը ընդլայնման նախագծի միայն մի մասն են: Ամբողջական նախագիծը ներառում է համալիր ու ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ և կառավարման մոտեցումներ, որոնք ուղղված են արդյունավետության բարձրացմանը և ռիսկերի նվազեցմանը ու մեղմացմանը:
- **Ի՞նչ է նախատեսվում իրականացնել բնադաշտային և աշխատանքի անվտանգության տեսանկյունից:**
- Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է դեռևս 1950-ական թվականներից: Գործող արտադրական ենթակառուցվածքների զգալի մասը կառուցվել է հին նորմերին համապատասխան, և այն ժամանակակից դաշտայնացմանը և արտադրության փոփոխություններին հարմարեցնելու է անհրաժեշտ: Ընդլայնման նախագծի բաղկացուցիչ մաս կազմող ենթակառուցվածքների նախագծային աշխատանքներն ուղղորդվում են՝





կարևորելով մեր աշխատակիցների և շրջակա միջավայրի անվտանգությունը՝ հիմնվելով ազգային և միջազգային ժամանակակից չափանիշների վրա:

Արժևորելով շրջակա միջավայրի ղախողա-
նությունը՝ նախատեսվում է կառուցել նոր,
ժամանակակից նորմերին համապատաս-
խան հրդեհաշիջման համակարգ, նոր՝
ավելի լայնածավալ թափոնների ղախեստ՝
հետագա կառավարումն ու սորտավորումն
ավելի արդյունավետ կազմակերպելու հա-
մար:

Կարևորելով աշխատակիցների առողջու-
թյունը՝ նախագծային լուծումներում առաջ-
նահերթություն է տրվել օդափոխման,
ասոդիաբիոն և աշխատանքային միջա-
վայրի կառավարման համակարգերին:

Լշեճը, որ այդ գործունեության շրջանա-
կում ջրամատակարարման սխեման չի
փոփոխվի, սակայն կներդրվեն նոր տեխ-
նոլոգիաներ, որոնք կբարձրացնեն ջրի օգ-
տագործման արդյունավետությունը: Լա-
խատեսվում են նաև մակերևույթի ջրերի
որսման վաթաշարեր՝ իրենց ժամանակա-
կից լուծումներով:

Առանձնահատուկ կարևոր տեղ է զբաղեց-
նում խտացուցիչի կառուցումը, որը թե՛ ներ-
կայիս արտադրողականությամբ, թե՛ նախա-
տեսվողի մաս է կազմում: Ջրի շրջանառու
համակարգի միջոցով այն թույլ կտա նվա-
զեցնել թարմ տեխնիկական ջրի ծախսը
շուրջ 30 %-ով:

**- Որքա՞ն են ընդլայնվելու հանքի սահման-
ները և քանի նոր աշխատատեղ է տա-
հանջվելու:**

- Արտադրողականության ծավալները
բարձրացվելու են լեռնահատկացման ակ-
տի հիման վրա՝ գործող բացահանքի սահ-
մանների փոքր-ինչ փոփոխմամբ: Լախա-
տեսվող գործունեությունը հիմնականում
իրականացվելու է գործող արտադրական
տարածքներում:

Լիազոր մարմնի կողմից համապատաս-
խան արդյունահանման թույլտվության
ստացման դարազայում, նախագիծը կի-
րականացվի փուլային տարբերակով: Հա-
վելյալ 8 միլիոն արտադրողականության
ցուցանիշին ընկերությունը նախատես-
վում է սկսել 2030 թվականին: Հիմնական շի-
նարարական աշխատանքները նախատես-
վում է սկսել 2027 թվականի կեսերին՝ կա-
ռույառու կազմակերպությունների միջոցով:
Հաշվարկված է, որ բուն շինարարության
փուլում, զգալի աշխատուժե կներգրավվի:

Լշեճը նաև, որ կարևորելով տարածաշր-
ջանի սոցիալ-տնտեսական վիճակը՝ շի-
նարարական աշխատանքների իրակա-
նացման նախադրությունները կտրվի
տեղական կազմակերպություններին և տե-
ղական աշխատուժին:

ԶՊՄԿ բարեգործական հիմնադրանք խթանում է շարունակական կրթությունը



ԶՊՄԿ բարեգործական հիմնադրանք խթանում է շարունակական
կրթությունը և աջակցում է աշխատակիցների և նրանց երեխաների
կրթության ֆինանսավորմանը:

Համաձայն որդեգրված սկզբունքի, որի առաջնահերթությունն ու նշա-
տակն է՝ խթանել ուսման որակը, փոխհատուցումները իրականացվում
են՝ ըստ ուսանողի առաջադիմության:

Ուսման վճարների փոխհատուցման կարգը և սկզբունքը

Թե՛ աշխատակիցների, թե՛ նրանց զավակների դեմքում փոխհատուց-
ման չափը կախված է ուսանողի առաջադիմությունից:

1-ին կուրսի 1-ին կիսամյակում փոխհատուցվում է ուսման կիսամյա-
կային վճարի 100 %-ը:

1-ին կուրսի 2-րդ կիսամյակից սկսած գործում է ՄՈԳ (միջին որակա-
կան գնահատական) - ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ տոկոսային հարաբերակ-
ցության բանաձևը:

Մինչև 49.99 % չի փոխհատուցվում:

- 50 - 69.99 % փոխհատուցվում է կիսամյակային վճարի 50 %-ը:
- 70 - 89.99 % փոխհատուցվում է կիսամյակային վճարի 70 %-ը:
- 90 - 100 % փոխհատուցվում է կիսամյակային վճարի 100 %-ը:

Եթե 1-ին կիսամյակում ՄՈԳ-ը կազմել է 50-69.99 %, իսկ 2-րդ
կիսամյակում ուսանողը առաջադիմություն չի գրանցել, ապա 2-րդ
կիսամյակի համար ուսվճարը չի փոխհատուցվում:

1-ին կիսամյակում 70-89.99 % առաջադիմություն ունեցող ուսանողը
2-րդ կիսամյակի ուսվճարի փոխհատուցում կստանա, եթե առնվազն
ղախողանել է նույն ՄՈԳ-ը: Այս դեմքերում կփոխհատուցվի 2-րդ կի-
սամյակի վճարի 50 %-ը:

Աշխատակից ուսանողների ուսման վարձը փոխհատուցվում է միայն
որոշ ֆիլիալին մասնագիտությունների դեմքում:

Այն ուսանողները, ովքեր սովորում են

Հերացու անվան ԵՊԲՀ-ում, մինչև 70 % ՄՈԳ-ի դեմքում փոխհա-
տուցում չեն ստանում:

Հայաստանի ամերիկյան համալսարանում փոխհատուցվում է
49.99 %-ից բարձր ՄՈԳ-ի դեմքում և կիսամյակի համար առավելա-
գույնը 500.000 դրամի չափով:

Հայաստանի եվրոպական և Երևանի գյուղատնտեսական համալսա-
րաններում փոխհատուցվում է 49.99 %-ից բարձր ՄՈԳ-ի դեմքում և
կիսամյակի համար առավելագույնը վճարի 50 %-ը:

Մասնավոր այլ բուհերի, դպրոցների, ԼՈՒՀ-երի և այլ ուսումնական
հաստատությունների ուսման վճարը չի փոխհատուցվում:

Համակարգի ներդրումը միայն մեկ նշանակ է հետադարձում՝ **ՆՊԱՍ-
տել ուսանողների առաջադիմության բարձրացմանը, խթանելու
անհրաժեշտ և կիրառական կրթությունը, բացառել ձևական դիմու-
նի մեղքերման միտումը:**



Komatsu PC 4000-ը կդառնա մեր փրկարար օդակը

**2026-ը ԶՊՄԿ-ն
սկսում է արդեն
խսկ առաջընթացի
մեծ քայլով:
Արտադրական
գործընթացի
արդյունավետության
բարձրացման
ուղղված
ծրագրերը հետևում
են մեկը մյուսին:**

Komatsu PC 4000-ի մոնտաժման աշխատանքները սկսվեցին հունվարի սկզբին և ավարտվեցին սահմանված ժամկետում՝ փետրվարի կեսերին: Չնայած եղանակային բարդ դրամաներին՝ ԶՊՄԿ բացահանքի տարածքում հսկա տեխնիկայի մոնտաժման աշխատանքներն ընթացան լայն թափով՝ անվտանգության կանոնների խիստ դաժողանաճաճ:

«ԻԿՕ Սաշիների» ՍՊ ընկերությունը, որը հանդիսանում է «Կոմացու» ընկերության դաշտոնական մատակարարը, ԸՆԿերություն էր գործողել իր հայաստանյան ներկայացուցիչներին: Պրոֆեսիոնալ մասնագետներից բաղկացած խումբը ԶՊՄԿ աշխատակիցների հետ, հսկա էքսկավատորի մոնտաժման աշխատանքները հասցրեցին ավարտին:

- **Komatsu PC 4000-ի** մոնտաժը կատարվեց ԶՊՄԿ Էներգամեխանիկական սղասարկման և վերանորոգման դեպարտամենտի վերահսկողությամբ. մեր մի խումբ աշխատակիցներ օգնեցին գործընկեր կազմակերպության մասնագետներին: Արդեն իսկ ԶՊՄԿ-ում է միջազգային կարգ ունեցող հրավիրյալ մասնագետը, և սկսվել են 15-20 օդերատորների ուսուցման դասընթացները: Բնությանը բարձր միավորներ հավաքած օդերատորները կդառնան մոր տեխնիկայի հիմնական շահագործողները,- **ասում է ԶՊՄԿ Էներգամեխանիկական սղասարկման և վերանորոգման դեպարտամենտի տնօրենի տեղակալ Արտեն Սարգսյանը:**

- Այս տեխնիկան ՀՀ-ում և առհասարակ տարածաշրջանում առաջինը ձեռք բերեց մեր ընկերությունը: Արդեն իսկ շահագործում ենք **Cat 60/40 էքսկավատորը՝ մույն 22 մ³ շերտի տարողությամբ, դարգադես PC 4000-ը ուղղահայաց շերտով է: Կաշխատի 180 տոննա բեռնատարողությամբ՝ ինքնաթափերի հետ,-** ցշում է Արտեն Սարգսյանը և շարունակում,- Komatsu-ն այսօր աշխարհում բարձր



վարկանիշ ունի և մեծ վստահություն է վայելում:

Այն հանքարդյունաբերական, ճանադարհաշինական տեխնիկայի ու ճանկավոր բեռնիչների վաճառքի և սղասարկման գործում առաջատար է, և մեր համագործակցությունն ընկերության հետ շարունակվում է: -Շատ լավ ժամանակ եք եկել,- ժողիտով ու ոգևությամբ է դիմավորում մեզ **ԶՊՄԿ բացահանքի ղեկավար Արմեն Հարությունյանը՝** կանգնած **Komatsu PC 4000-ի մոտ:**

- ԶՊՄԿ-ն 2024թ-ին «Կոնացու» ընկերության հետ մեզ գործուղեց ԱՄՆ՝ Լաս Վեգաս: Այնտեղ ծանոթացանք այս հսկայի հետ, տեսանք տեխնիկական հնարավորությունները: Սա յուրահատուկ տեխնիկա է և յուրահատուկ մոտեցում է դրան:

Հիացմունքը չթաքցնելով՝ հանքի ղեկավարը հետևում է նոր տեխնիկայի մոնտաժման աշխատանքներին և մեզ ներկայացնում, թե որքան կարևոր է հանքարդյունաբերության մեջ առաջատար էքսկավատորի շահագործումը: Այն շատ բարձր աշխատունակություն ունի, բոլորում կարողանում է բարձել մոտ 90 տոննա: **Komatsu PC 4000 մակնիշի էքսկավատորը մեզ շատ անհրաժեշտ կլինի ցանկալի արդյունքի հասնելու համար, հատկապես, եթե հետագայում արտադրական ծավալները մեծանան:**

Կարելի է ասել՝ այս մեղքերնամբ, դատարաստվում ենք նոր թափով արդյունահանման: **Komatsu PC 4000-ը** հիմնականում կաշխատի դատարկ աղարների դուրսբերման ուղղությամբ: Բարձրացնում ենք ճանադարհի չափերը, տեղաշարժերը, ամեն ինչ համադասախանցեցնում ենք դատարկ աղարների տեղափոխման շափորոշիչներին: Եթե մի բան կարող ենք անել երկու բոլորում, առաջինը անել՝ ութ բոլորում: Հանքարդյունաբերության ամեն բոլորում՝ թանկ է:

- Մեր առջև դրված խնդիրները կկարողանանք ճիշտ ու ժամանակին լուծել,- մշտնադարձ է բացահանքի ղեկավարը և գոհունակությամբ ավելացնում՝ **Komatsu PC 4000-ը** կդառնա մեր փրկարար օղակը:



Արմեն Սարգսյան

ԶՊՄԿ էներգամեխանիկական սղասարկման և վերանորոգման դեպարտամենտի տնօրենի տեղակալ



Սերգեյ Օլյալ

«ԻԿՕ Մաշիների Արմենիա» ընկերության հանքային ստորաբաժանման ղեկավար



Արմեն Հարությունյան

ԶՊՄԿ բացահանքի ղեկավար

Komatsu PC 4000-ի տեխնիկական նկարագիրը

-«Կոնացու» ընկերության Դյուսելդորֆ քաղաքում գտնվող գործարանում արտադրված այս նոր՝ Komatsu PC 4000-11 մոդելը ներկայացվել է 2019 թվականին: Սա բարձր արտադրողականությամբ հիդրավլիկ հանքային էքսկավատոր է՝ 400 տոննա շահագործական

զանգվածով, որը համարված է ուղիղ դույլով՝ 22 խորանարդ մետր ծավալով: Հայաստանում սա այս դասի առաջին էքսկավատորն է,- ասում է «ԻԿՕ Մաշիների Արմենիա» ընկերության հանքային ստորաբաժանման ղեկավար Սերգեյ Օլյալը:

-Ի տարբերություն նախորդ տերիաների՝ այս նորի էլեկտրոնային բաղադրիչների քանակը կրճատվել է: Այն համարված է **«Կոնացու Պլյուս 2»** մոնիթորինգի համակարգով, որն իրական ժամանակում տրամադրում է տվյալներ մեքենայի տեխնիկական վիճակի մասին, օգնում է նվազագույնի հասցնել ղարադուրդները և վերլուծել աշխատանքի արդյունավետությունը, ինչպես նաև աղահանում է մեքենայի աշխատանքային դարամետրերի ընդլայնված վերահսկում:

-էքսկավատորը համարված է շրջանաձև տեսադիտարկման խցիկներով. օտերատորը կարող է վերահսկել մեքենայի շուրջը ընդգրկող տարածքը՝ առանց տեղից շարժվելու և աշխատանքից կտրվելու,- մշտնադարձ է Սերգեյ Օլյալը: Մենք սղասարկում ենք «Կոնացու» տեխնիկայի 24 միավոր: Այս էքսկավատորը մեր տեխնիկական դարկի 25-րդ միավորն է: Ի դեպ, Սերգեյ Օլյալը առիթը բաց չի թողնում շեշտելու, որ Հայաստանում տեխնիկական սղասարկման մասնագետների խիստ բաց կա: - Այդ իսկ դատարանով ստիպված ենք մասնագետներ ներգրավել արտասահմանից: Այս իրավիճակին արդյունավետ լուծում տալու նպատակով, մենք դատարան ենք վերադաստրաստել բազային տեխնիկական գիտելիքներ ունեցող հայաստանցի երիտասարդներին: Մեծ ուրախությամբ ցանկացողներին կընդունենք մեզ մոտ աշխատանքի,- ավելացնում է Սերգեյ Օլյալը:

Հերմինե Միքայելյան



Սքանավորիր QR կոդը՝ դիտիր Komatsu PC4000-ի մասին դատարան տեսանյութը

Չանքերի հսկաները.

**հզոր տեխնիկան
և արտադրողականությունը
ուղիղ համեմատական են**

Բացահանքի աշխատանքային ռիթմը ձևավորում է ծանր հանքարդյունաբերական տեխնիկան՝ հատկապես հիդրավլիկ էսկավատորները, որոնք բառացիորեն շարժման մեջ են դնում հանքի ամբողջ գործընթացը: Ժամանակակից հանքարդյունաբերությունում լայնորեն կիրառվում են **Komatsu** ընկերության բարձր արտադրողականությամբ էսկավատորները: Այս շարքի ամենահայտնի մոդելներից մեկը **Komatsu PC4000**

հիդրավլիկ էսկավատորն է. **աշխատանքային քաշը՝ 400 տոննա**

- **շերտի տարողությունը՝ 22 մ³**
- **շարժիչի հզորությունը՝ 1875 ձիաուժ:**

Ադահովում է կայուն և բարձր արտադրողականություն՝ նույնիսկ ամենաբարդ դայնամներում:


Komatsu ընտանիքում կան նաև ավելի հզոր ներկայացուցիչներ: Դրանցից է **PC8000** էսկավատորը՝ իրական հսկա հանքարդյունաբերական տեխնիկայի աշխարհում:

- **աշխատանքային քաշը՝ 750.780 տոննա**
- **շերտի տարողությունը՝ 40.42 մ³:**

Երկշարժիչ համակարգով աշխատող այս մեքենայի ընդհանուր հզորությունը մոտ **4000 ձիաուժ** է, ինչը թույլ է տալիս նրան աշխատել խոշոր հանքարդյունաբերական նախագծերում և առաջնություն արտադրողականության:

դակնություն:

Օրինակ՝ **Komatsu HD785** հանքային բեռնատարի բեռնման համար **PC4000** էսկավատորին միջինում անհրաժեշտ է մոտ երեք շերտի, մինչդեռ ավելի մեծ **PC8000** մոդելը նույն աշխատանքը կարող է կատարել ընդամենը երկու շերտով: Թվերը դարձնում են տալիս՝ որքան մեծ է տեխնիկան, այնքան արագ է կատարվում աշխատանքի ցիկը: Վերջերս կոմբինատում շահագործման է հանձնվել նոր **Komatsu PC4000** հիդրավլիկ էսկավատորը: Այս փուլում մեքենայի օդերատորները անցնում են մասնագիտական ուսուցում և կատարելագործում իրենց հմտությունները, որոնցից առաջնություն տեխնիկան ամբողջ հզորությամբ ներգրավվի դատարկ աղարների բեռնման աշխատանքներում: Արդյունաբերության առաջան՝ համեմատական է տեխնոլոգիայի ուժին:

 <p>HD785</p> <p>91 տոննա</p>	 <p>x 4</p>	 <p>x 2</p>
	PC 4000	PC 8000
Շարժիչի հզորություն	1,875 ձիաուժ	4,020 ձիաուժ
Քաշ	395 - 410 տ	750 - 780 տ
Շերտի տարողություն	22մ ³	42մ ³
HD 785 ինքնաթափի բարձման ցիկը	3-4 շերտի	1-2 շերտի

Հեղինակավոր Los Angeles Times (LA Times) տարբերակնը հատուկ անդրադարձ է կատարել Հայաստանին՝ ներկայացնելով երկրի տնտեսության ամենաառանցքային ոլորտները



8 • ARMENIA SPECIAL REPORT

Friends across the region

Armenia is firmly part of the global community with advancing infrastructure projects in all areas. The U.S. brokered peace treaty with Azerbaijan was the catalyst.

A modern, connected hub for regional and global investors, including the diaspora.

As Armenia enters a new era shaped by peace and renewed regional openness, the Ministry of Territorial Administration and Infrastructures, under Davit Khudatyan, is playing a decisive role in transforming the country into a hub for connectivity and growth.



Davit Khudatyan, Minister of Territorial Administration and Infrastructures

At the core of this strategy is regional integration. Under the government's Crossroads of Peace Initiative, Khudatyan noted that "we are working to reopen all transportation routes passing through Armenia, based on principles of sovereignty, reciprocity and

mutual respect." Flagship projects such as the North-South Road Corridor, new tunnels in Syunik and planned rail and bridge links with neighboring countries are positioning Armenia as a vital transit route between the Persian Gulf, the Black Sea and Europe.

Energy security is another pillar of modernization. Armenia has rapidly advanced its renewable agenda, with Khudatyan emphasizing: "Our 2030 strategy aimed for 1,000 megawatts of solar power, a target we reached four years ahead of schedule." The government is now developing storage capacity and strengthening cross-border energy links, reinforcing Armenia's role as a regional clean energy player.

Urban progress is advancing in parallel. "Yerevan is leading Armenia's smart city initiatives, with modern tools like smart transport payment systems and connected transport stops already in use," he explained.

With peace established and strong international partnerships, particularly with the U.S., Armenia is becoming an open, investor-friendly destination. Strategic infrastructure, renewable energy and smart technologies are reshaping the country.



ZCMC organized a tree planting event in the Artsvank settlement of Kapan.

Still going strong

With origins in the Soviet era yet using modern technology, ZCMC is Armenia personified.

around 3% and we account for 5-7% of exports," Khudolyi exclaimed. The company's local impact is particularly visible in Syunik, where poverty levels are significantly lower than the national average.

Facing declining global ore grades, ZCMC has prioritized technological modernization and sustainability. The company plans to expand processing capacity to 30 million tons of ore by 2028 and 40 million tons after 2030. Investments span advanced processing technology, water-saving circular systems, tailings management and heavy equipment modernization. Governance reform has been central to this transition: "We now manage 3,000 supply-chain tenders annually and have been the only company in Armenia reporting on sustainability for four years in a row, following international standards."



Roman Khudolyi, General Director, Zangezur Copper-Molybdenum Combine (ZCMC)

The Zangezur Copper-Molybdenum Combine occupies a major position in Armenia's economic and industrial landscape, embodying the country's heritage and future potential. Founded in 1952, ZCMC is built on ancient foundations: mining in the Syunik region dates back to the Stone and Bronze Ages, showcasing Armenia's long-standing resource riches.

"Enterprises like ZCMC often give rise to 'mono cities' and Kajaran is a prime example — the town was established after the mine," said Roman Khudolyi, general director of ZCMC and president of the Geotroling Group. "This creates a deep connection with the community. Many families have worked here for generations, which adds an emotional and managerial responsibility."

ZCMC's macroeconomic significance is equally substantial. "We are proud to be the top taxpayer in Armenia for the fourth year in a row. Our contribution to GDP is

Optimism is rife but caution remains. "Developing Armenia's mining sector requires a joint effort between the government and private companies," advised Khudolyi, adding, "most existing mines have only 10-15 years of life left, so new discoveries are urgently needed." Armenia's mining future, he argued, depends on trust, transparent regulation and renewed geological exploration. "Armenia's soil is underexplored and its mining potential is enormous yet undervalued."

ARMENIA SPECIAL REPORT 9

Mining since time immemorial

ZCMC is one of the largest contributors to Armenia's GDP and its export balance. It brings decades of experience to a key pillar of the country's economy.

Armenia's mining sector dates back to the dawn of time, but needs continued investment.

Roman Khudolyi has worked in Armenia since 2007 so is well placed to discuss the mining sector's successes and shortcomings. He leads ZCMC, a company at the heart of the industry.

How has ZCMC earned its historical role in Armenia's industrial landscape?

In 2022, we celebrated ZCMC's 70th anniversary — project operations began in 1952. However, mining in this region goes back much further, to the Stone, Bronze and Iron Ages. Archaeological finds show that people were mining here as early as the 6th-7th centuries BC. The company started producing in 1952 with 215 tons of ore. Today, we produce 23 million tons a year — what took a year then is produced in just three days now. Built during Soviet times, ZCMC was an important enterprise that offered training and recognition for skilled workers. The company even received the Order of Lenin, the highest honor, showing appreciation for the people and their work. Beyond any ideology, it was about community. Many families have worked here for generations, which adds an emotional and managerial responsibility. Today, ZCMC employs 4,700 people, mostly from the

surrounding communities of Kapan and Kajaran. The mine supports not only direct jobs but also a wider economic ecosystem, including supply chains and local services.

We are proud to be the top taxpayer in Armenia for the fourth year in a row. Our contribution to GDP is around 3%, and we account for 5-7% of exports. Even more meaningful is our impact on the local community: while Armenia's average poverty rate is 24% and some regions reach 40%, in Syunik, where we operate, it's just 7%.

Today, we have plans to expand the processing capacity to 30 million tons of ore in the coming years and we aim to reach 40 million later on.

How does the global mining sector affect your business? Mining globally faces declining ore grades: when ZCMC started, copper content was 1% per ton; today, it's only 0.22-

"Expansion isn't just adding more ore — it requires upgrading the entire infrastructure, including crushing systems, water and energy."

Roman Khudolyi, General Director, Zangezur Copper-Molybdenum Combine (ZCMC)

0.23%. To stay competitive, a mining company needs to do two things: use advanced technology to enhance production and work towards growth. Expansion isn't just adding more ore — it requires upgrading the entire infrastructure, including crushing systems, tailings management, water and energy. Every part is interconnected: without water, electricity or proper tailings management, even the best technology can't operate. This complex, integrated approach has guided ZCMC for years. Our strategy is to approach expansion as a technological challenge. We are integrating the latest technologies with leading global engineering companies like Metso and FLSmidth. This includes mod-



Mining in Armenia dates back millennia and ZCMC is hopeful for new discoveries to maintain production.

ernization, planning a large water-thickening system and implementing a circular water system — projects that save water and improve efficiency. We are also investing in new equipment, including Komatsu and Caterpillar machines, ensuring the pit and operations are fully modernized and ready for increased production.

What steps should the government and private sector take to restart exploration? Developing Armenia's mining sector requires a joint effort between the government and private companies. Almost all current mines were discovered during Soviet times, except for Amulsar. Most existing mines have only 10-15 years of life left, so new discoveries are urgently needed. Geological exploration requires huge investments and at least a decade to turn a deposit into a mine. This can be done by creating a strong investment environment to attract private investors or by government-backed geological enterprises that prepare sites for

auction. The government has digitized old Soviet mining databases, but they only contain existing knowledge; no new discoveries have come from them. More work needs to be done toward this. You can have the best technology, talent and investment but without ore, there is nothing you can do. Armenia's soil is underexplored and its mining potential is huge yet undervalued.

What can ZCMC offer a partner looking to enter Armenia's mining sector?

With Armenia, we bring experience — not just technical, but understanding local nuances and relationships. I have worked in Armenia since 2007 and much has improved. Investing isn't easy; it requires effort, patience and navigating clear, well-defined rules. Only those willing to do the work will succeed.

In investment, we must work, communicate and cooperate, otherwise even small problems can derail everything. I love Armenia and see a lot of potential for developing good investment opportunities.

Armenia's mining industry in figures

- The sector contributes about 5% to GDP despite covering 0.5% of Armenia's land area
- Copper and molybdenum concentrates make up over half of merchandise exports
- Armenia has hundreds of deposits of copper, gold, iron, zinc and other metals

LA Times-ի տղազիր տարբերակուն և կայքուն հրատարակվել է Զանգեզուրի ղղնճանոլիթեղենային կոնքինատի ճատին անդրադարձ՝ հաշվի առնելով այն կարևոր փաստը, որ ձեռնարկությունն առանցքային տեղ է զբաղեցնում Հայաստանի տնտեսական և արդյունաբերական լանդշաֆտում:

Պարբերականին տված հարցազրույցում ԶՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլյին ընդգծել է, որ վերջին 4 տարում ընկերությունը դարձել է Հայաստանի խոշորագույն հարկատուն: Շեշտվել է, որ ԶՊՄԿ-ի ազդեցությունը ՀՆԱ-ում կազմում է մոտ 3%, իսկ երկրում հանքարդյունաբերության ծավալը՝ 5%, այն դեռ ընդհանուր զբաղեցնում է ՀՀ տարածքի ընդամենը 0,5%-ը:

Պարբերականը ուշադրություն է դարձրել նաև համայնքային զարգացմանը, քանի որ ԶՊՄԿ-ի գործունեության արդյունքում Սյունիքի մարզում աղքատության մակարդակն ավելի քան երեք անգամ ցածր է հանրապետության միջին ցուցանիշից:

«Համաշխարհային առաջատար ինժեներական ընկերությունների հետ, ինչպիսիք են Metso-ն և FLSmidth-ը, մենք ինտեգրում ենք նորագույն տեխնոլոգիաներ: Այս գործընթացը ներառում է արդիականացում, ղղշանքների խտացման, ջրի շղջանառու համակարգի նախագծում և կառուցում. նախագիծ, որը խնայում է ջուրը և բարձրացնում այդ կարևորագույն ռեսուրսի օգտագործման արդյունավետությունը: Մենք նաև ներդրումներ ենք անում նոր տեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ: Komatsu և Caterpillar՝ ձեռքնամեխանիզմները աղահովում են բացահայտելու և բոլոր գործառնությունների լիարժեք արդիականացումը», - ասել է Խուդոլյին:

Ընկերության գլխավոր տնօրենը հարցազրույցն ավարտել է հաջողության իր տեսլականով. հանքարդյունաբերության ոլորտում հաջողելու համար կան մի քանի կարևոր հանգամանակներ. ղղեպ է ներդրել իսկայական ջանք, լինել համբերատար և ունենալ սահմանված կանոններով առաջնորդվելու կարողություն: Կհաջողեն նրանք, ովքեր ղղատրաստ են աշխատել:

Հոդվածը հասանելի է LA Times-ի կայքուն:

Մեծ դահր

**ԱճԵՆ ԾԵԿԱ ԿԱՐՈՂ
ԵՆՔ ՍԱԽՈՒՄՆԵՎ ԾԵՐ
ԿԱՆՈՆՆԵՐԸ՝ ԻՈՂՎ
ԱՎԵԼԻ ԱՃՈՐ
և ՃԱՐՃՆՈՎ ԱՎԵԼԻ
ԱՌՈՂՋ ԴՊԱՆՃԱԼՈՒ ԽԱՃԱՐ**



«Պահր» ասելով՝ առաջին հերթին Պատկերացնում ենք սննդի ու հոգևոր Պահրության ընդհանուր դրույթները: Իսկ գործնականում այն ենթադրում է հսկել, Պահրացել կանոններ: Պահրն այն ժամանակն է, երբ մեր միտքը «Պահրակ» է կանգնում, հսկում է հոգուն՝ այնտեղ Պահրված գանձը Պահրացելու Խաճար: Ժամանակի մեջ իր հետքը թողնելու Խաճար մարդը ստեղծել է օրացույց, որի ամեն օրն իր «անուն» ու խորհուրդն ունի: Եկեղեցին էլ ունի իր օրացույցը, և եկեղեցական օրացույցի մեջ առանձնահատուկ է Մեծ Պահրի շրջանը իր կիրակիների խորհրդով: Պահրի ժամանակ ամենատարածված հարցերը վերաբերում են կանոններից. ի՞նչ անել, ի՞նչ չանել, ի՞նչ ուտել և այլն: Ծատերն անդրադառնալով սննդի ու հոգևոր Պահրի Խաճարությանը՝ ղուդում են, որ կարևորը հոգևոր Պահրն է. եթե Ավետարանն ասում է, թե ուտելիքով մարդը չի ողջվում, առաջինը ի՞նչ է սննդի Պահրը կարևոր: Հստակ է որ արտաքին կեցությունն անդրադառնում է հոգևոր կեցությանը: Պահրի շնորհիվ մարդը եկեղեցական-ծիսական ուղի մեջ է մտնում, որտեղ կարևոր են որոշ կանոններ: Ուտել բուսական ծագմամբ կերակուրներ: Մեղրը համարվում է Պահրի կերակուր, իսկ ձուկը՝ ոչ: Սնվել չափավոր: Թյուրիմացու-

թյուն է, երբ Պահրի ընթացքում սնվում ենք միայն բուսական կերակուրներով, սակայն ազահաբար ենք վերաբերում ուտելիքին: Պետք է լինել ժուժկալ: Հրաժարվել կախվածությունից: Պահրը տալիս է հնարավորություն և ժամանակ՝ հոգու ազատության Խաճար: Այդ ազատությունը Պահրված է մոլություններից, կախվածություններից ու Պահրաղ զբաղմունքներից հրաժարվելով (Խաճարազային խաղեր, սոց. ցանցերում ժամանակի վատնում, խաղամոլություն, սերիալների դիտում, Պահրաղ զբաղմունքներ, դատարկախոսություն): Աղոթել կանոնավոր: Պահրի ընթացքում կարևոր է աղոթական կյանքը: Աղոթքը երկու տեսակ է՝ անհատական և ընդհանրական: Պետք է փորձենք անհատական աղոթքի միջոցով բացահայտել Աստծո ներկայությունը մեր ամենօրյա կյանքում: Պահրի ժամանակ առկա բոլոր սահմանափակումներն իմաստ ունեն, եթե դրանք օգնում են միտքը ազատել ոչ կարևոր զբաղմունքներից և կենտրոնանալ կարևորի վրա: Այլ կերպ՝ վերաբերել կյանքը, որի արդյունքում մենք լրացնում ենք կիսատ թողածը: Այս կանոններն ընդհանուր են բոլորի Խաճար, սակայն կան նաև կանոններ, որոնք մարդն անհատաբար ինքն իր Խաճար է հաստատում՝ հաշվի առնելով սեփական տկարությունները: Այդ կանոնները անհատական են և Պահրաղի չեն բոլորի Խաճար, թեև կարող են օրինակ լինել յուրաքանչյուրին:

Կան մարդիկ, ովքեր Պահրի ժամանակ իրենց զրկում են՝

- սուրճ խմելուց, թեև սուրճը բուսական է, սակայն հաշվի առնելով, որ ունեն կախվածություն, որոշում են հրաժարվել դրանից, թեկուզ բուսական, սակայն որոշ ուտեստներից, որոնց նկատմամբ ունեն հատուկ թուլություն
- քաղցր ուտեստներից, որոնք կարող են բուսական ծագում ունենալ, բայց հաշվի առնելով սերը քաղցրավենիքի նկատմամբ՝ որոշում են հրաժարվել քաղցրավենիքից
- հեռուստացույց նայելուց
- սոց. ցանցեր մտնելուց
- ծխախոտից
- զվարճանքի վայրեր այցելությունից և այլն:

ԱճԵՆ մարդ կարող է սահմանել իր կանոնները և որոշել, թե ինչ կարող է անել ինքնազարգացման Խաճար՝ հոգով ավելի աճուր և մարմնով ավելի առողջ դառնալու նպատակով: Չահառ.am-ի փոխանցմամբ, սննդային Պահրից դուրս գալու Խաճար կարելի է Ավագ շաբաթվա ընթացքում մասնակցել եկեղեցում իրականացվող բոլոր արարողակարգերին, իսկ վերջում՝ Շրագայույցի օրը՝ շաբաթ երեկոյան, առավոտից ծոն Պահրել եւ մասնակցել Շրագայույցի Ս. Պատարագին ու Հաղորդություն ստանալով՝ դուրս գալ Պահրից:

Աքիս.

փոքր ճարձիհ,
ձեռ խիզախություն



COP17՝ Կենսաբանական բազմազանության ճասիհն ՄԱԿ-ի կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը, որը կոչվում է նաև UN Biodiversity Conference 2026 (CBD COP17), կանցկացվի 2026 թ. հոկտեմբերի 18-30 Երևանի «Մերիդիան» էքստր կենտրոնում: COP17 Հայաստանում զմահատվում է որդես ձեռ հնարավորություն՝



Լուսանկարը - Բերտա Մարտիրոսյանի

համաշխարհային բնադահողանական օրակարգի վրա կենտրոնանալու, աշխարհի երկրների համագործակցությունն ուժեղացնելու, գիտական, մասնագիտական և երիտասարդական համայնքների ներգրավվածությունն առաջնություն և Հայաստանի միջազգային դերակատարությունը ձեռնացնելու առումներով: Հայաստանի կենսաբազմազանությունը շարքում այս անգամ ներկայացնում ենք փոքր գիշատիչ կաթնասուն Աքիս, որը դասակարգվում է Mustelidae ընտանիքին:

Երբ խոսում ենք արագաշարժ և ճկուն գիշատիչների մասին, հաճախ հիշում ենք աղվեսին կամ գայլին: Սակայն Հայաստանի բնաշխարհում կա մի փոքրիկ, բայց բացառիկ հմուտ որսորդ՝ աքիսը: Լա դասակարգվում է Mustelidae ընտանիքին, որի ներկայացուցիչներն աչքի են ընկնում իրենց ճարտարությամբ և համարձակությամբ: Հայաստանում առավել տարածված են Mustela nivalis-ը և Mustela erminea-ն:

Փոքրիկ, բայց անսահման ճկուն

Աքիսը կարող է ունենալ ընդամենը 15-25 սմ մարմնի երկարություն, սակայն նրա էներգիան անհամեմատ ձեռ է: Երկարավուն մարմինը և կարճ ոտքերը թույլ են տալիս սողնակե նույնիսկ մկների ներքին: Լա շարժվում է արագ ու ցատկոտ քայլերով, հաճախ կարծես «սահելով» հողի վրա: Հետաքրքիր է, որ որոշ աքիսներ ձմռանը փոխում են իրենց մորթու գույնը՝ դառնալով գրեթե ամբողջովին սպիտակ: Սա հատկապես բնորոշ է Mustela erminea-ին լեռնային շրջաններում. սպիտակ գույնը օգնում է ձյան մեջ աննկատ մնալ:

Խիզախ որսորդ

Չնայած իր փոքր չափերին՝ աքիսը համարձակ գիշատիչ է: Լա կարող է հարձակվել իրենից մեծ կրծողների վրա: Հիմնական սնունդը մկներն են, առնետները, երբեմն նաև փոքր թռչունները: Այսօրվա աքիսը մեծ օգուտ է բերում գյուղատնտեսությանը՝ նվազեցնելով վնասատուների քանակը: Գիտնականները նկատել են, որ աքիսը երբեմն որսում է ավելին, քան տվյալ տարիին կարող է ունել՝ տալիս ստեղծելով աղագայի համար: Սա բնորոշ է հատկապես այն շրջաններին, որտեղ սնունդը սեզոնային է:

Աքիսը Հայաստանում

Աքիսները տարածված են Հայաստանի տարբեր մարզերում՝

- Արարատյան դաշտավայրում,
- Լոռու և Շիրակի անտառային գոտիներում,
- Սյունիքի լեռնային շրջաններում:

Նրանք կարող են բնակվել ինչպես դաշտերում ու թփուտներում, այնպես էլ քարքարոտ լեռնալանջերին՝ երբեմն հասնելով մինչև 3000 մետր բարձրության:

Հետաքրքիր փաստեր

- Աքիսը համարվում է աշխարհի ամենափոքր գիշատիչ կաթնասուններից մեկը:
- Նրա սրտի զարկերը շատ արագ են՝ բարձր նյութափոխանակության դրսևանումով:
- Կարող է մեկ գիշերվա ընթացքում շրջել մեծ տարածք՝ որսի որոնման համար:
- Չնայած վայրի բնույթին՝ շատ ուշադիր մայր է և խնամքով դաստիարակում է ձագերին:
- Հայկական ժողովրդական խոսքում «աքիս» բառը երբեմն օգտագործվում է խորամանկ ու ճարտիկ մարդու մասին:

Բնության հավասարակշռության դահողան

Աքիսը փոքր է, բայց նրա դերը էկոհամակարգում մեծ է: Կարգավորելով կրծողների թվաքանակը՝ նա նպաստում է գյուղատնտեսական մշակաբույսերի դահողանմանը և բնության բնական հավասարակշռությանը: Այս փոքրիկ, արագաշարժ գիշատիչը հիշեցնում է մեզ, որ բնության մեջ նույնիսկ ամենափոքր կենդանին կարող է ունենալ մեծ նշանակություն:



ԶՊՄԿ տնկարանը մեծ դեր ունի Սյունիքի կանաչադառնալու գործում

ԶՊՄԿ տնկարանի նոր ձեռքբերումները

Կադան-Երևան մայրուղով անցնելիս, հատկապես վաղ գարնանն ու աշնանը, դժվար է չնկատել համաչափ մարզերով ու մշտադալար ծառերով առանձնացող փոքրիկ տարածքը՝ ԶՊՄԿ տնկարանը: Հենց այստեղից են աղահովվում ձեռնարկության տարբեր տեղամասերի կանաչադառնալու համար անհրաժեշտ տնկիներն ու թփերը, և ոչ միայն: Տնկարանում այսօր անցվում են 31 տեսակի ծառեր և թփեր:

Վերջերս տնկարանի տարածքն ընդլայնվել է. առկա 5000 մ²-ին ավելացել է ևս 2000 մ²: Ձեռնարկության բնադառնալույթի բաժնի ղեկավար Արծվիկ Ծատրյանի խոսքով՝ ընդլայնումը նպաստակալից է և միտված է տնկարանի կարողությունների մեծացմանը:

Առանց հողարտությունը թաքցնելու՝ նա ցույց է տալիս կառուցվող շենքերը, որի կմախքն արդեն դաստիարակ է:

- 650 մ² մակերեսով այս շենքերը հագեցած է լինելու նորագույն տեխնոլոգիաներով՝ օդափոխության և խոնավության կառավարման խելացի համակարգերով: Շուտով այն ամբողջությամբ դաստիարակ կլինի: Այս նախաձեռնությամբ նախատեսվում են 2025 թ. հունիսին մինչև 2026 թ. հունիսին տնկարանի հզորությունը: Բացի այդ, ծրագրում ենք փորձարկել նաև նոր բուսատեսակների անցումը, - ասում է Արծվիկ Ծատրյանը:

Տնկարանի ղեկավար Գրիգորյանը դեռևս չի շտապում

բարձրաձայնել բոլոր ծրագրերի մասին:

- Երբ հաջողված փորձեր ունենանք, անդամներն ցույց կտանք: Սակայն արդեն հիմա կարող են ասել, որ շենքերը մեր դաստիարակներում շատ անհրաժեշտ է: Ձեռնարկ այստեղ շենքերի մասին շատ ցածր է լինում, իսկ մեծանուն արևը հաճախ վնասում է նոր տնկիներին: Տնկարանի համար փակ հողային տարածքը դարձնելու է այն թույլ կտա աշխատել տարբեր ամիսներին՝ ներկայիս 6-7 ամսվա փոխարեն, - նշում է նա:

Շենքերի կառուցումը հնարավորություն կտա նաև բույսերի աճին հետևել հենց ծելու դասին: Միևնույն Գրիգորյանի խոսքով՝ այլ տեղերից ստացված տնկիները երբեմն խնամքի դաս են ունենում, մինչդեռ շենքերի անկախությունը թույլ կտա ամբողջությամբ վերահսկել աճը և խոստովել թերխնամ բույսերից:

Տնկարանի ներդրումը Սյունիքի համայնքների կանաչադառնալու և անտառվերականգնման գործում

ԶՊՄԿ տնկարանում անցված 241 ծառ, թուփ ու ծաղիկ արդեն տնկվել է Սյունիքի տարբեր քաղաքների փողոցներում: Սառը և քամոտ Սիսիանում տնկվել են կատալպաններ, գնդաձև ակացիաներ ու բարդիներ, իսկ ավելի տաք Կադանում՝ թույաներ և փոփոքր գիհի:

Սակայն ձեռնարկության բնադառնալույթի բաժնի աշխատակիցները չեն սահմանափակվում միայն տնկի-

ների տրամադրմամբ: Նրանք նախ գնում են տարածքը, ուսումնասիրում հողը, աղա առաջարկում բուսատեսակներ, որոնք լավագույնս կհարմարվեն տվյալ միջավայրին: Երբեմն էլ իրենք են ստանձնում նորատնկերի խնամքը:

Տնկարանի դերը մեծ է նաև անտառվերականգնման ծրագրերում: «Հայաստան» ՊՈԱԿ-ի հետ համագործակցության շրջանակում այստեղից տրամադրվել է շուրջ 23 հազար տնկի, որոնցով վերականգնվել է 18 հա անտառ Կարմրաքարում և Աճառանում:

Տնկարանի կարևորությունը ռեկուլտիվացիայի գործում

Տնկարանում անցվող ծառափառատեսակները օգտագործվում են ոչ միայն կանաչադառնալու գործերի ստեղծելու, այլև «Արծվանիկ» ղեկավարում և դասարկ աղաքների լցակայաններում իրականացվող ղեկավարման ռեկուլտիվացիայի համար:

Արծվիկ Ծատրյանը ներկայացնում է նաև այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների թվերը:

- Շուրջ 30 հա տարածքում ցանվել է կորնգան: Այն բազմամյա բույս է՝ խոր արմատներով, որը նպաստում է հողաշերտի բարելավմանը: Միայն 2025 թ. վերականգնման ռեկուլտիվացիոն նպատակով տնկվել է շուրջ 4200 ծառ, և բոլոր տնկիները տրամադրվել է հենց տնկարանը, - նշում է նա:

Նորաշենիկի նախադրման երևացող համաչափ մարզերի կողքին շուտով կավելանա նաև նոր շենքերը: Այստեղ անցված բույսերը կարողանան Սյունիքի քաղաքների մայրքերը, կօգնեն վերականգնել անտառները և կնպաստեն վնասված հողերի ռեկուլտիվացիային: Իսկ եթե տնկարանի մասնագետների փորձերը հաջողվեն, Կադանում հնարավոր կլինի անցնել նաև նոր տեսակի ծառեր:

Տնկարանի Բաղայան

Թվերով

- 2025 թ. տնկարանի տրամադրված **241 ծառ, թուփ ու ծաղիկ** տնկվել է Սյունիքի տարբեր քաղաքների փողոցներում
- Տնկարանը տրամադրվել է շուրջ **23 հազար տնկի**, որոնցով վերականգնվել է **18 հա անտառ** Կարմրաքարում և Աճառանում
- Կառուցվում է **650 մ² մակերեսով շենքեր, որը հագեցած կմեծացնի տնկարանի հզորությունը**

Հույսի և հավատի օջախ՝ աջակցության կարիք ունեցող երեխաների համար

» Հայաստանում հաշմանդամություն կամ առանձնահատկություն ունեցող երեխաների թիվը քիչ չէ: Մարզերում նրանք հաճախ բախվում են խնդիրների՝ մասնագետների թակասի և համադասարանական կենտրոնների սահմանափակության դատմանով:

Հույսի և հավատի օջախ՝ արդեն 22 տարի

Կադանուն մանկական ստորտը զարգացնելու նպատակով «Հույսի և հավատի օջախ» հասարակական կազմակերպությունը 2004 թվականից աջակցում է մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխաներին: Կազմակերպության 45 շահառուների թվում են մանկական ուղեղային կաթված, Դաունի համախտանիշ, եղիլեդիա, ատիստիկ և այլ խնդիրներ ունեցող երեխաներ:

Ֆիզիոթերապիայի և հոգեբանական աշխատանքի շնորհիվ նրանք փորձում են դառնալ ավելի ինքնուրույն: «Օգնության կարիք ունեցողները շատ են, բայց հնարավորությունները՝ սահմանափակ: Կադանուն նման կենտրոնները քիչ են, և հաճախ ծնողները ստիպված են դիմել մայրաքաղաքի վճարովի ծառայություններին, մինչդեռ մեզ մոտ դրանք անվճար են», - ասում է կազմակերպության նախագահ **Մերի Ստեփանյանը**:

Համատեղ ջանքերովի արդյունքը

Պարաոլիմպիկները կազմակերպվում են երեխաների տարիքային և անհա-



Մերի Ստեփանյան
«Հույսի և հավատի օջախ»
հասարակական կազմակերպության նախագահ

տական առանձնահատկությունները հաշվի առնելով: «Մարմնի շարժումը՝ հոգու ազատություն» ծրագրի շրջանակում շաբաթական երկու անգամ անցկացվում են ֆիզիոթերապիայի դասընթացներ, իսկ երեխաներն ու նրանց ծնողները ստանում են նաև հոգեբանական աջակցություն:

12-ամյա Արևը, որը հենաշարժողական խնդիրներ ունի, արդեն նկատելի առաջընթաց է գրանցել: Նրա մայրը՝ Մարինե Հովհաննիսյանը ասում է, որ ստորտը ոչ միայն բուժական նշանակություն ունի, այլ նաև նպաստում է առողջ արդյունավետին:

Ֆիզիոթերապևտ Ալվարո Միրզոյանի խոսքով՝ յուրաքանչյուր երեխայի



հետ անհատական աշխատանքն է հաջողության գրավականը: «Նույնիսկ փոքր առաջընթացը օգնում է երեխային ավելի լիարժեք ինտեգրվել հասարակությանը», - նշում է նա:

ԶՊՄԿ-ի աջակցությունը

Մինչև 2017 թվականը կազմակերպությունը ֆինանսավորվում էր տարբեր բարեգործական ծրագրերով, իսկ վերջին գրեթե տասը տարիներից այն աջակցություն է ստանում Զանգեզուրի ղրղմամուլիքդեմային կոմբինատից:

Ընկերությունը տարեկան շուրջ 4 միլիոն դրամ է հատկացնում ծրագրի իրականացման համար, ինչը հնարավորություն է տալիս աղափոխել մասնագետների աշխատանքն ու անհրաժեշտ գույքը:

ԶՊՄԿ սոցիալական ծրագրերի ավագ համակարգող Ռուզաննա Ասրյանի խոսքով՝ ընկերությունը սոցիալական դաստիարակման և աշխատանքի շրջանակում նման ծրագրեր է իրականացնում ոչ միայն Կադանուն, այլև ազդակիր համայնքներում:

Վերջին երեք տարիներից կազմակերպությանը հատկացվել է ընդհանուր առմամբ 12 միլիոն դրամ:

Թեև օգնության կարիք ունեցող երեխաների թիվը մեծ է, «Հույսի և հավատի օջախ» կազմակերպությունը շարունակում է քայլեր ձեռնարկել ծառայությունների շրջանակը ընդլայնելու ուղղությամբ:

Նարե Խաչատրյան



Արևմտահայկական
QR կոդը
մանրամասների
ծանոթանալու
համար

Ֆիզիոթերապևտ Ալվարո Միրզոյան

ԶՊՄԿ-ում շարունակվում է թվայնացման լայնածավալ ծրագրի ներդրումը



Ալեքսանդր Պոնոմարյովը ու թվայնացման թիմը

Թվային նոր համակարգ, որը փոխում է ոչ միայն գործընթացները, այլ նաև աշխատանքի մշակույթը, բայց, չի փոխարինում մարդուն:

Հաճախ թվայնացումն ընկալվում է որդես տեխնոլոգիական փոփոխություն: Բայց երբ այն դառնում է իրական, փոխվում են գործիքները, նոր հմտությունների անհրաժեշտություն է ծագում:

Ընկերությունում մեկնարկած մարդկային ռեսուրսների կառավարման և աշխատավարձի հաշվառման ավտոմատ համակարգի ներդրումը նոր քայլ է դեռի ժամանակակից և մարդակենտրոն կառավարում:

Նոր համակարգը միավորում է աշխատակցի ամբողջ ճանապարհը մեկ թվային միջավայրում՝ առաջին աշխատանքային օրից մինչև զարգացում, առաջադասում և վարձատրություն, փաստաթղթաշրջանառության արագ ադապտում և այլն: Թվերը, գործընթացներն ու լոգոտիպություն-

ները հավաքվում են մեկ հարթակում՝ ստեղծելով ավելի հստակ և արդար աշխատանքային իրականություն:

Նախագծի ղեկավար Ալեքսանդր Պոնոմարյովի հավաստմամբ՝ սա միայն ՏՏ (IT) նախագիծ չէ, այլ մտածողության փոփոխություն: «Մենք լայնածավալ ծրագրի ներդրում չենք իրականացնում: Մենք փորձում ենք ստեղծել միջավայր, որտեղ մարդը վստահում է համակարգին: Երբ հաշվարկները ճշգրիտ են, գործընթացները՝ թափանցիկ, մարդիկ ավելի ազատ են կենտրոնանալու իրենց աշխատանքի վրա»:





Կամո Հայրապետյան
Աշխատավարձի հաշվառման
բյուրոյի վարիչ

**Թվայնացման Գոտատակը ճարդուն
փոխարինելը չէ, այլ Գրան աջակցելը**

«Մենք ճարդկային լեզուն տեղափոխում ենք թվային աշխարհ: Մեքենան հաշվարկում է, համակարգը հիշում է, բայց արժեքը շարունակում է ստեղծել ճարդը: Տեխնոլոգիան ղեկը է աշխատի ճարդու կողքին, ոչ թե Գրա փոխարեն»,- Պոնոմարյով:
Համակարգը միավորում է բազմաթիվ օղակների ճարդկային ռեսուրսների կառավարում, հաշվառության, աշխատատեղանակի հաշվառում, ղեկավարություն: Այն, ինչ նախկինում բաժանված էր տարբեր գործընթացների, այժմ դառնում է մեկ ամբողջություն: Արդյունքում նվազում են սխալները, արագանում են որոշումները, իսկ ամենակարևորը՝ աճում է վստահությունը:

**Ծրագրի ղեկավարը կարևորում է
Ճան անցման դատասխանատու փուլը**

«Մենք ընտրել ենք հանգիստ և մտածված ճանադար: Մի շրջան հին և Գոր համակարգերը կաշխատեն միասին: Փոփոխությունը ղեկը է լինի հասկանալի և անվտանգ բոլորի համար»:
Թվային Գոր համակարգը բացում է Ճան Գոր հնարավորություններ՝ տվյալահեն կառավարման, ավելի հստակ վերլուծության և երկարաժամկետ զարգացման համար: Սակայն ամենակարևոր փոփոխությունը, թերևս, անտեսանելի է՝ դա վստահության ձևավորումն է:
Այս նախագիծը նշանավորում է ընկերության զարգացման Գոր փուլը: Փուլ, որտեղ տեխնոլոգիան դառնում է գործընկեր, գործընթացները՝ ղարգ, իսկ աշխատանքային միջավայրը՝ ավելի արդար և կանխատեսելի: Եվ գուցե սա է ամենակարևոր արդյունքը, երբ թվայնացումը դադարում է լինել ղարգաղես համակարգ և դառնում է մշակույթ:
Ծրագրի ղեկավարը Ճան շեշտում է, որ թվայնացման գործընթացին ինտեգրվել են տարբեր տարիքային խմբի և աշխատանքային փորձառությանը աշխատակիցներ, ովքեր մեծ հետաքրքրությամբ են անցել թեստավորման փուլը և օրեցօր բարելավում են իրենց գիտելիքները:
Աշխատավարձի հաշվառման բյուրոյի վարիչ Կամո

Հայրապետյանը նշում է, որ իր՝ հաշվառահական ոլորտում առավել քան 30 տարիների փորձառության ընթացքում Գորություններ և Գորարարություններ, իհարկե, եղել են: Հիշում է, որ 1990-ականներին ընկերությունում գործում էր մեքենահաշվարկային կայան՝ առանձին ստորաբաժանում, որը մասնակի համար կարևոր և Գորարարական դեր էր կատարում: Այստեղ էին կենտրոնացվում և մշակվում ընկերության հաշվառահական տվյալները. մասնագետները մոտազգրում էին հաշվառահական հաշվարկները, ձևավորում հաշվետվություններ և աղահովում Գինանական տեղեկատվության համակարգված ղահողանումը: Այդ տարիներին մեքենահաշվարկային կայանները հանդիսանում էին թվայնացման առաջին քայլերից մեկը՝ թույլ տալով մեծ ծավալի հաշվարկներ կատարել ավելի արագ և ճշգրիտ, քան՝ ձեռքով հաշվարկների դեղքում:



Տեխնոլոգիական առաջընթացին զուգահեռ ընկերությունը աստիճանաբար անցում կատարեց ավելի ժամանակակից լուծումների. Գերդվեցին հայկական ծրագրային համակարգեր (ՀՄ), որոնք զգալիորեն հեշտացրին հաշվառահական գործընթացների կազմակերպումն ու տվյալների կառավարումը: Այսօր ընկերությունը ևս մեկ կարևոր քայլի շեմին է: **1C:3YPI** ծրագրային համակարգին անցումը թույլ կտա առավել արդյունավետ կազմակերպել հաշվառահական և կառավարման գործընթացները՝ ժամանակակից ղահանջներին համադատասխան: «Հանձնարարությունը հստակ է, բայց դեռ փորձնական փուլերում ենք, վաղ է խոսել վերջնարդյունքներից, քայլ առ քայլ առաջ ենք գնում»,- հավելում է Կամո Հայրապետյանը:

Լիլիթ Իսրայելյան

Բացահանք. ճարտ Գարնանաճուտ







Էլեկտրական անվտանգություն

Էլեկտրական անվտանգությունը՝ կազմակերպչական և տեխնիկական միջոցների և միջոցառումների համակարգ է, որը առաջնություն է ճարտարագիտական տրամաբանությունը էլեկտրական հոսանքի, էլեկտրաճազմասական դաշտերի և ստատիկ էլեկտրականության վնասակար և վտանգավոր ազդեցություններից:

Տեխնիկական անվտանգության միջոցներ

- Միայն լարումը անջատելուց հետո.
 1. Ստուգել լարման բացակայությունը հավաստագրված ցուցիչով,
 2. Կատարել հողանցում և կարճ միացում,
- Պահպանել սահմանված անվտանգ հեռավորություն (կախված լարումից),
- Օգտագործել միայն փորձարկված և մեկուսացված գործիքներ,
- Տեղադրել տաշտոյանիչ էկրաններ և զգուշացնող նշաններ:

Անհատական տաշտոյանիչ միջոցներ

- Դիէլեկտրիկ ձեռնոցներ (ստուգված ժամկետով)
- Պաշտոյանիչ սաղավարտ և դիմապաշտոյան վահան կամ ակնոց
- Մեկուսիչ կոշիկներ
- Դիէլեկտրիկ գորգ կամ հատակ (բաշխիչ վահանակների մոտ)

Արգելվում է

- Աշխատել լարման տակ (եթե դա հատուկ թույլատրված և հատուկ մեթոդաբանությամբ չէ),
- Սոտեճալ բաց հաղորդիչներից առանց հողանցման,
- Օգտագործել վնասված գործիք կամ վնասված անհատական տաշտոյանիչ միջոցներ,
- Աշխատել միայնակ (միայն վիզուալ զննումը կարելի է կատարել միայնակ):

Արտակարգ իրավիճակների դեմքում

- Անմիջադեմ անջատել հոսանքը,
- Չդիմադրել տուճածից մինչև հոսանքի անբողջական անջատումը,
- Ցուցաբերել առաջին օգնություն,
- Զեկուցել տաշտախանաատու անձին և արձանագրել միջադեմը,
- Օգտվել ընկերության տարբեր արտադրամասերում և տեղամասերում փակցված «Օճանուցման տյան 15 րոտեի ընթացքում» ուղեցույցից, անհրաճեշտության դեմքում օգտվել ճակ արտակարգ իրավիճակների տյանից:

Գաճարի լուսանկարները՝ Նվեր Գելյայի